Անդրեյը և վատ բառը

Ջուլի Ս. Դոնալդսոն

Հիմնված է իրական պատմության վրա

«Կփորձեմ ապաշխարել, ավելի լավը լինել, աղոթել» (Children's Songbook, *98)*:

«Դու կարծում ես, որ բոլորից լավն ես, քանի որ չես հայհոյում»,- ասաց Նիկոլայը դասամիջոցին:

«Դա ճիշտ չէ»,- ասաց Անդրեյը:

«Ապա ինչո՞ւ մի հայհոյական խոսք չես ասում: Միայն մեկը: Դա քեզ չի սպանի: Բոլորն էլ հայհոյում են»:

Անդրեյը թոթվեց ուսերը: «Ես պարզապես չեմ ուզում»:

Անդրեյը գիտեր, որ հայհոյելը վատ բան է և հեռացնում է Սուրբ Հոգին: Անդրեյն ուզում էր, որ Սուրբ Հոգին լիներ իր հետ: Ուստի նա չհայհոյեց:

Անդրեյը նոր աշակերտ էր վեցերորդ դասարանում, և առայժմ Նիկոլայը միակն էր, ով ցանկանում էր լինել նրա ընկերը: Սակայն Նիկոլայն անընդհատ նրա հետ խոսում էր հայհոյելու մասին: Եվ օրեցօր Անդրեյը ավելի ու ավելի էր հոգնում ոչ ասելուց: Բացի այդ, Անդրեյը վախենում էր, որ Նիկոլայն այլևս ընկերություն չէր անի իր հետ, և նա մենակ կմնար:

«Ասա միայն մեկ հայհոյանք»,- ասաց Նիկոլայը դասերից հետո:

«Դրանից հետո ես քեզ հանգիստ կթողնեմ»:

Ի վերջո, Անդրեյն այնքան հոգնեց այդ ամենից, որ ընդամենը մի հայհոյանք ասաց, հայհոյանք, որն *այդքան էլ* վատ բառերից չէր կազմված:

Նիկոլայը գլխով արեց: «Լավ, այժմ դու մեզանից մեկն ես»:

Դրանից հետո Նիկոլայի մյուս ընկերները նույնպես խոսեցին Անդրեյի հետ: Կեսօրին նրանք միասին նախաճաշեցին, իսկ դասամիջոցին նրա հետ ֆուտբոլ խաղացին: Սակայն Նիկոլայի ընկերների խմբում լինելը նման էր սորուն ավազի վրա քայլելուն: Որքան շատ էր Անդրեյը շփվում նրանց հետ, այնքան շատ էր նա խոսում և գործում նրանց նման: Իսկ նրանք բոլորն էլ հայհոյում էին: Շատ: Նրանք ծաղրում և վիրավորում էին միմյանց: Նրանք կոպիտ բառեր էին օգտագործում իրենց ուսուցիչների մասին խոսելիս: Նրանք հաճախ էին բարկանում և անազնիվ արարքներ գործում: Աստիճանաբար Անդրեյը սկսեց ավելի հաճախակի բարկություն զգալ և ավելի ու ավելի շատ պատճառներ գտնել հայհոյելու համար:

Մի երեկո, երբ մայրիկն ու հայրիկը տանը չէին, Անդրեյը և իր ավագ քույր Կատյան սկսեցին վիճել, թե որ հաղորդումը պիտի դիտեն: Անսպասելիորեն մի հայհոյանք դուրս թռավ Անդրեյի բերանից:

Կատյան ապշած նայեց նրան: «Ես կասեմ մայրիկին»:

Անդրեյը վազեց իր սենյակ և աղմուկով փակեց դուռը: Ի՞նչ էր կատարվում բոլորի հետ: Ինչո՞ւ էին բոլորն անընդհատ բարկացնում իրեն: Երբ նրա ծնողները տուն եկան, Անդրեյը կիսով չափ բացեց իր դուռը և լսեց, թե ինչպես Կատյան ասաց. «Մայրիկ, Անդրեյը հայհոյեց ինձ»:

«Ի՞նչ»: Մայրիկը զարմացած էր: «Անդրեյը երբեք չի հայհոյի»:

Անդրեյը փակեց դուռը և ընկավ իր անկողնու վրա: Նա սկսեց մտածել այն մասին, թե որքան էր փոխվել այն պահից սկսած, երբ սկսել էր հայհոյել: Նա վաղուց չէր զգացել Սուրբ Հոգին:

Անդրեյը ծնկի իջավ իր անկողնու մոտ և աղոթեց: «Սիրելի Երկնային Հայր, ներիր ինձ իմ վատ պահելաձևի և բարկության համար: Կներես, որ սկսել եմ հայհոյել: Ես այլևս չեմ անի նման բաներ»:

Մինչ Անդրեյն աղոթում էր, նրա սիրտը լցվեց ջերմ զգացումներով: Ինչ նա սկսել էր հայհոյել, առաջին անգամնա իրեն երջանիկ զգաց: Նա գիտեր, որ Աստված սիրում է իրեն և կարողացավ զգալ Սուրբ Հոգին: Նա իրեն ներված զգաց և գիտեր, որ կարող էր փոխվել և դառնալ ավելի լավը:

Իր աղոթքից հետո նա մայրիկին պատմեց ճշմարտությունը և ներողություն խնդրեց Կատյայից: Դրանից հետո Անդրեյն իրեն ավելի լավ զգաց: Ապաշխարությունը լավ զգացողություններ արթնացրեց նրա մեջ:

Հաջորդ օրը դպրոցում Անդրեյը չնախաճաշեց Նիկոլայի խմբի հետ: Այլ նստեց մի քանի երեխաների կողքին, որոնց չէր ճանաչում: Ժամանակ կպահանջվեր, սակայն Անդրեյը գիտեր, որ կգտներ լավ և ուրախ ընկերներ, որոնք չէին հայհոյում: Ճիշտ իր պես: ■

Հեղինակն ապրում է Յուտայում (ԱՄՆ):

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ

«Ես պատկառանքով կօգտագործեմ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի անունները: Ես չեմ հայհոյի և կոպիտ խոսքեր չեմ օգտագործի» (Ավետարանի իմ չափանիշները):

☐ Թերթիկի մի կողմում գրեք կամ նկարեք, թե լավ բառերն ինչ զգացողություններ են առաջացնում: Մյուս կողմում գրեք կամ նկարեք, թե վատ բառերն ինչ զգացողություններ են առաջացնում:

☐ Կարդացեք Ղևտացոց 19.12: Ինչո՞ւ է կարևոր պատկառանքով օգտագործել Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի անունները:

☐ Հարցրեք ձեր ծնողներից կամ ղեկավարներից մեկին, թե մենք ինչու պիտի օգտագործենք լավ բառեր, և ինչպես է դա օրհնել նրանց:

☐ Ես մարտահրավեր եմ հղում ինձ . . .

_____

_____

_____